իգ. Թղ. 53ա. «Քէթպ էզէլի արզան տէյէմ» (585–6)։

իդ. Թղ. 53բ–54ա. (Գովեստ Փիլիպպոս կաթողիկոսի). «Տէր Փիլիպպոս սրբահոգի տատրակ ամբիծ» (550–1)։

իե. Թղ. 54ա–54բ. (Գովեստ Նահապետ կաթողիկոսի). «Նահապետ հայրապետ, նորանձամբ նեալ նորնակէտ» (576–7)։

իզ. Թղ. 55բ. «Ի յերուսաղէմէ առ ի Ստամպօլ։ [Տ]օստ և եարան մուհիպներաց» (551–2)։

իէ. Թղ. 57բ. (Առ Խոճայ Կարապետ Կարնեցի). «Էրբ ի կատար եհաս որդիդ» (552–3)։

իը. Թղ. 58ա–59ա. «Այրն ասէ՝ Ա՛յ մարդ լըսէ» (554–6)։

իթ. Թղ. 61բ–65բ. «Առ թագաւորն Լեհաց։ Ի գահ այդմ փառաց քաջազեղ արքայ» (526–36)։

ի. Թղ. 65բ–67ա. (Թուղթ մխիթարութեան առ անծանօթ ոմն). «Տէրն մեր Քրիստոս ըստ մեծի և անճառելի խոնարհութեան իւրոյ» (502–6)։

իա. Թղ. 67բ–68ա. (Գիր յանդիմանութեան առ Իրբանոս ոմն). «Ըստ քեզ Իրբանոս կարծեցելոյդ» (500–2)։

իբ. Թղ. 68բ–69ա. «Ղարիպի։ Փորձանաւորդ ի պատահմանց մի՛ հոգար» (665–6)։

իգ. Թղ. 69բ. (Առ եպիսկոպոս ոմն). «Տեառն եպիսկոպոսի և քո հոգիընկալ սրբակրօնի» (498–9)։

իդ. Թղ. 71ա–87ա. Քսանևհինգ ոտանաւորներ, ոմանք ամբողջ և ոմանք թերի, իւրաքանչիւրին տողերը և երբեմն բառերը կը սկսին այբուբենի տառերով ու կը կազմեն նմանաձայն բառախաղեր՝ խրթին ու դժուարիմաց։

իե. Թղ. 87բ և 90ա. «Ցիշեա՛ ըզՅոբն՝ արդար և անարատ էր» (666–7)։